ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N 668

«29» 06. 2018թ. ք.Երևան

## ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018թ. մարտի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարաման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշման 1-ին հավելված1-ին կետը՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ պաշտպանության նախարարության ներքին և արտաքին ազդարարման պատասխանատու նշանակել ՀՀ պաշտպանության նախարարության մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի պետ, գնդապետ Ա. Ավետիսյանին (հեռախոս՝ 010 29 45 19, ՀՀ ՊՆ **թեժ գիծ՝ 1-28,** էլ. հասցեն՝ **center@mil.am** ):

2. ՀՀ ՊՆ ներքին աուդիտի, աշխատակազմի վերահսկիչ վարչությունների և ռազմական ոստիկանության պետերին՝

հիմք ընդունելով 2017թ. հունիսի 9-ի «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի դրույթները՝ համագործակցել ՀՀ ՊՆ մարդու իրավունքների և

բարեվարքության կենտրոնի հետ:

3. ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության պետին՝

հրամանը հրապարակել ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում:

4. Հրամանի կատարումը վերահսկում է ՀՀ պաշտպանության նախարարը:

5. Հրամանը հասցնել ՀՀ ԶՈՒ ԳՇ պետին, ՀՀ պաշտպանության նախարարի և ԶՈՒ ԳՇ պետի տեղակալներին, ՊՆ, ԶՈՒ և ԶՈՒ ԳՇ վարչությունների, առանձին բաժինների, ՌՈ, զինվորական հաստատությունների պետերին, ՊԲ-ի, ԲԿ-ների և առանձին զորամասերի հրամանատարներին, ՀՀ զինվորական կոմիսարին:

**ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Դ. ՏՈՆՈՅԱՆ**